

ԱՎ. ԽՍԱՀԱԿՅԱՆ

**ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐԸ**  
(9-ը մայիսի, 1945)

Մեր սուրբ փառքով դրեցինք պատշաճ,—  
Մեծ հաղթանակի օրն է ցնծալից.

Պարտվեց մահաշունչ ոսխը դաժան,  
Երգեր են հորդում զվարթ սրտերից:

Հոծ փողոցներում աղմուկ ու շառաչ,  
Հոսում են մարդիկ ծափով, ծիծաղով,  
Մի մարդ սեղան է բացել տան առաջ,  
Լցուի թասերը ուկեփայլ գինով:

Եվ անցորդներին կանչում է, խնդրում,—  
Եղբայրներ, որդուս կենացը խմենք.

Հերոս է որդիս, հաղթեց թշնամուն,  
Զեր որդիների կենացն էլ խմենք:  
Խմում են խինդով, ցնծում երջանիկ,  
Եվ զարկում նորից գավաթներն իրար:  
Նրանց մեջ մի հայր ասում է մեղմիկ:  
Է՞ս էլ իմ որդու հանգստյան համար:  
Գլխարկներն խկույն հանում են նրանք,  
Խոր ակնածանքով լուս են մի պահ.  
Խմում են անձայն զրիվածի համար  
Եվ նեղում գինին սուրբ հացի վրա:  
1945

ՄԻԱՎԱԿԱՐԱԿՅԱՆ

**ՏԱՂՎԵՐԱԴԱՐՁԻ**

Մեր գորգերը՝ ձեր ճամփեքին,  
Մեր ծաղկունքը՝ ձեր ոտքի տակ,  
Ու ձեր երթին, ոնց փառքի շամ՝  
արարատյան արևը բարկ,  
Զեր հաղթական վերադարձին՝  
մեր երկինքը՝ հաղթակամար,  
Դեպի հնոց երկիրն հայոց,  
հայոց քաջեր, բարով եկար:

Զեզ են գալի կարուտաի  
հայոց հովերն ամեն կողմից,  
Զեզ են փարզում մանկութ ընկեր,  
ծանոթ գետերը ցնծալից.  
Զեզնով հալարտ, երախտապարտ՝  
հայոց հողը ծաղկել նորից,  
Զեզ ճամփա՛ է բացել սիրով,  
հարազատներ, բարով եկար:

Տեսե՛ք, ձեր թուխ մանուկներն են  
ձեր դեմ վազում՝ հովերի հետ,  
Աղջկների հայացքները  
ձե՛զ են փնտրում երջանկալետ.  
Վշտից ցամքած արցունքը մոր՝

խնդությունից դարձել է գետ,  
Զեր մայրերի աչքին երևեկ,  
մոր գիրկը ձեր բարով եկար...

Եկեք սորենք այս չորս տարվա  
փոշին հոգնած ձեր ոտքերի,  
Ու համբուրենք սպիազարդ  
ձեր թուխ ճակատը զինվորի.  
Զեզնի՛ց առնենք կարուտն՝ ընկած  
հարազատի ու ընկերի,  
Ա՛յս, ում հարկի տա՛կ էլ իշնեք՝  
եղբա՛յրն եք մեր, բարով եկար:

Մեղա՛ն բացեք, թող խառնվեն  
վիշտ ու խնդում, արցունք ու երգ,  
Մեր քաջերը կարուտն՝ են  
հայոց գինուն, գինի՛ բերեք.  
Հաղթողների փառքի համար  
յոթը գիշեր, յոթը ցերեկ  
ժողովրդ նվագ ու երգ,  
հայոց քաջեր, բարով եկար...

1945

ՊԱՐՈՒՑՑ ՄԵՎԱԿ

**ԽԱՂԱՐԱԿՅԱՆ**

Խաղաղություն ամենքին և ամենուր, —  
Այդ ենք միայն մենք աշխարհին կամե-  
նում:

Խաղաղություն, որ խաղողը քաղցրանա,  
Որ նորատունկ այգին տա բերք ու բարիք:

Խաղաղություն, որ աշխաներն իր բանա  
Դաշտում մի տուղու, օրորոցում մի բալիկ,  
Մի ծով ցորեն՝ գարնանային արտի մեջ,  
Անգիր մի երգ՝ բանաստեղծի սրտի մեջ,  
Մի երեքնուկ՝ բացատի մեջ անտառի,  
Անխոս մի սեր՝ սրտի խորքում պատճի...